

9535

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԱՆՎԵՅԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԻՆԻ ԳԵՆԵՐԱԼԻՆԻ

1940

3KHI

3-49

3KII

Z-49

147

25 SEP 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՂՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

1 DEC 2009

Հ Ե Ղ Ա Փ Ո Խ Ա Կ Ա Ն
ԱՆՎԵՀԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐ

ՏՈՅՎՈ ԱՆՏԻԿԱՅՆԵՆ
ՊԱՎԵԼ ՏԿԱԶԵՆԿՈ
ԴՅՈՒՐՈ ԴՅԱԿՈՎԻԶ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴ ՄՈՊՐ-Ի ԿԵՆՏՐՈՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

9535

11.06.2013



997

41

ՄՈՊՐ-ի Կենտրոնը հրատարակելով Տոյվո Անտիկայենեի, Պավել Տկաչենկոյի և Դյուրո Դյակովիչի կենսագրական համառոտ տեղեկությունները, նպատակ է դնում մոպրականներին ծանոթացնել այս յերեք ընկերներին՝ Ֆինլանդիայի ժողովրդական հերոս՝ Տոյվո Անտիկայենեի, ազատագրված Բեսսարաբիայի ժողովրդի զավակ՝ Պավել Տկաչենկոյի և Հարավսլավիայի Կոմկուսակցության քարտուղար՝ Կ. Ի. Գ. Կ.-ի թեկնածու՝ Դյուրո Դյակովիչի հրաշալի գործունեության հետ, վորոնք իրենց կյանքը նվիրել են բանվոր դասակարգին ու նրա վերջնական ազատագրման պայքարին։ Նրանցից Պավել Տկաչենկոն և Դյուրո Դյակովիչը իրենց սեփական աչքով չտեսան իրենց ժողովրդի ազատագրությունը և հողտվեցին բուրժուազիայի զազրելի դահիճների կողմից, բայց Տոյվո Անտիկայենե հասավ իր նպատակին, նա ազատագրվեց 1940 թվին և ապրում է Խորհրդային Միության ազատ ու յերջանիկ ընտանիքում։

ՄՈՊՐԻ Կ Ե Ն Տ Կ Ո Մ



ՏՈՅՎՈ ԱՆՏԻԿԱՅՆԵՆ

ՏՈՅՎՈ ԱՆՏԻԿԱՅՆԵՆ

Տոյվո Անտիկայնեն ծնվել է 1898 թվին, հունիսի 8-ին, չքավոր պաստառագործի ընտանիքում, Սորկբայում— Ֆինլանդիայի մայրաքաղաքի բանվորական թաղամասում։ «Այնտեղ, Սորկբայում,— հայտարարեց Անտիկայնենը դասակարգային դատարանի առաջ,— բանվորի բաղմանդամ ընտանիքում դասակարգային բնազդը թափանցեց իմ արյան մեջ։ Ինը տարեկան հասակից յես ինձ կերակրում եյի սեփական աշխատանքով։ Սկզբում, վորպես լրագրավաճառ, հետո վորպես աշակերտ-բանվոր։ Սորկբայում յես սովորեցի հասկանալ դասակարգային պայքարը, Սորկբայում յես բռնեցի հեղափոխական պայքարի ճանապարհը...»։

1915 թվին, 17 տարեկան հասակում Անտիկայնեն մտավ Ֆինլանդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ, անմիջապես հարելով նրա հեղափոխական թեմին։ 1917 թվի փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների փոթորիկներում նա գլխավորում է սոցիալիստական յերիտասարդությունը։

Իր բոցաշունչ ճառերում, իր յերկաթե եներգիայով ու կամքով նա մասսաներին տանում էր իր հետեվից։ Նա շտապում է գյուղ, վորպեսզի այնտեղ կարմիր գվարդիայի ջոկատներ ստեղծի։ Նա ռազմա-ճակատի մի տեղից անցնում էր մյուս ճակատը

կարմիր գվարդիայի մարտիկներին կոչ անելով՝ պայ-
քարել և տոկունություն ցուցաբերել թշնամու— ֆին-
նական և շվեդական սպիտակ դվարդիականների և
գերմանական ինտերվենտների գերազանց ուժերի
հանդեպ:

Ֆիննական հեղափոխության պարտությունից հե-
տո Անտիկալենն փախչում է խորհրդային Ռուսաս-
տան:

Անվեհեր մարտիկ՝ քաղաքացիական պատերազմի
ճակատներում, Կոլչակի և անգլիական ինտերվենտնե-
րի դեմ, Յուդենիչի և Կրոնշտադտի խռովարարների դեմ
մղված մարտերում և վերջապես դահուկայինների
հրամանատար՝ ֆիննական սպիտակ բանդիտների դեմ
մղված պայքարում, — վորոնք 1921—22 թվականնե-
րի ձմեռը ներխուժեցին խորհրդային Կարելիա, — ահա
Անտիկալենյի կյանքի հետագա ետապները:

Ճանապարհազուրկ լեռնային վայրերում, խիտ
անտառներում և ժայռոտ լեռներում անցնելով որա-
կան 30-ից մինչև 50 կիլոմետր Անտիկալենն իր հե-
րոսական ջոկատի հետ արագ յերթով անցավ ավելի
քան հազար կիլոմետր է թափանցեց ֆիննական սպի-
տակ բանդիտների խորը թիկունքը:

Կիմոս լիճ գլուղում նա վռնչացնում է թշնամու
շտաբն ու պահեստները, թիկունքից հարձակվում է
կապը և ղեկավարությունը կորցրած թշնամու վրա,
այդ կերպ վճռելով ֆիննական սպիտակ բանդիտների
դեմ ուղղված արշավանքի բախտը: Թշնամին ստիպ-
ված էր հեռանալ խորհրդային Կարելիայից: Անտի-
կալենն և նրա ուղեկիցներն անորինակ հերոսության

համար պարգևատրվեցին կարմիր դրոշի շքանշանով:

Դանիական խոշոր գրող Մարտին Անդերսեն
Նեկսեն, հիշելով այդ հերոսական արշավանքը, հե-
տևյալ կերպ է բնութագրում Անտիկալենին:

Անտիկալենն մեկն էր այն հազարավոր մարդ-
կանցից, վորոնք ուր ել վոր լինեն բուցավառվում են
մտքերը: Նա իր վոգեվորությամբ վարակեց ամբողջ
Կարելիան: Ուր ել վոր նա յերևար, — Մուրման-
սկսում անգլիացիների դեմ, Յուդենիչի թե այլ սպի-
տակ բանդիտների դեմ, — ամենուրեք զինվորական
բախտը ժպտում էր Կարելիներին: Նրա մասին լե-
զենդներ եյին պատմում, նրա պայքարն առասպելա-
կան բնույթ էր կրում, նրա մեջ մարմնավորվել եյին
զինվորական բախտը և զինվորական հանճարը: Ամե-
նուրեք նա յերևում էր այնպիսի ապշեցուցիչ արա-
դությամբ, վոր ժողովուրդը պնդում էր, թե իբր նա
միաժամանակ կարող է լինել մի քանի տեղերում:
Նրա հերոսության մասին բազմաթիվ յերգեր են յեր-
գում, զրույցներ են պատմում: Կարելիայում ուր ել,
վոր ժամանես, ամենուրեք ժողովուրդը նրա մասին է
խոսում, ինչպես Կալենկալի հերոսների մասին (կա-
րելական և ֆիննական ժողովրդական եպոս):

Անտիկալենն 10 տարի զխալնորում էր Ֆինլան-
դիայի կոմունիստական կուսակցությունը, վորն աշ-
խատում էր խոր ընդհատակում: Ֆիննական բուրժու-
ազիայի ղեակցիոն մասը, ֆիննական սպիտակ գվար-
դիականերն ու ֆաշիստները ցնծագին վոռնալով ընդու-
նեցին այն լուրը, թե «վոստիկանական թուլցիկ կոր-

պուտին հաջողվել է 1934 թվի նոյեմբերի 6-ին ձերբակալել Տոյվո Անտիկայանեհին:

Տոյվո Անտիկայանեհի դատավորությունն անցկացվեց յերկու ետապներով: 1935 թվի փետրվարի վերջերին նրա դեմ պետական դավաճանության մեղադրանք հարուցեցին: Այդ մեղադրանքը հիմնված էր Անտիկայանեհի կոմունիստական գործունեության, նրա հատվածների և գրքերի — մանավանդ նրա «Հանուն խորհրդային Կարելիայի» գրքի վրա: Դատավարությունը փոխադրվեց Աբոպրովենցիալ քաղաքը, դատավարության նյութերի մի մասը միայն վերջին մոմենտին հանձնվեց Անտիկայանեհին: Սակայն, նա կարողացավ փախչել կերպով ջախջախել մեղադրանքի բոլոր կետերը և հարձակման անցնել: Անտիկայանեհ հայտարարեց. — «Իմ գործունեության մասին յես հաշվետու յեմ միայն Կոմունիստական ինտերնացիոնալին... Յես համոզված եմ, վոր խորհրդային Միության վրա նոր հարձակումներ լինելու դեպքում այնտեղ ապրող ֆիննական բանվորները նորից դուրս կգան պաշտպանելու սոցիալիստական հայրենիքը»:

Անտիկայանեհի քաջարի վարքը և Ֆինլանդիայում ու արտասահմանում համերաշխության հզոր յեկույթները ստիպեցին ընդհատել դատավարությունը և հետաձգել դատավճիռը: Հետաքննական և դատական իշխանությունները բողոքի բազմաքանակ նամակներ և բանաձևեր եյին ստանում:

Փարիզում, Լոնդոնում, Նյու-Յորքում պատգամավորություններ եյին ուղարկվում ֆիննական դեսպանատները, պահանջելով ազատել Անտիկայանեհին: Սկան-

դինավյան յերկրների մայրաքաղաքներում — Ստոկհոլմում, Կոպենհագենում և Ոսլոյում կազմակերպեցին Անտիկայանեհի հետ համերաշխ լինելու մեծ ցույցեր: Ոտաբերկրյա փաստաբաններն իրենց ծառայությունն եյին առաջարկում, վորպես Անտիկայանեհի պաշտպաններ: Հելսինգֆորս ժամանեց շվեդական իրավաբան Արվիտ Ռուդինգը, Անտիկայանեհի պաշտպանությանը մասնակցելու համար: Անտիկայանեհի հետ համերաշխ լինելու շարքումը ֆիննական բուրժուազիայի վրա այնպիսի տավորություն թողեց, վոր վորոշվեց, հակառակ որոնքի, Անտիկայանեհի դատավարությունը կատարել դնփակ: Մարտի վերջին Հելսինգֆորսի Կենտրոնական բանտի յեկեղեցում սկսվեց Անտիկայանեհի յերկրորդ դատավարությունը:

Այս անգամ նրան մեղադրում եյին կոդոպուտի և սպանությունների համար, հենվելով կեղծ փաստաթղթերի և կեղծ վկաների ցուցմունքների վրա, նույնիսկ դատախազը գերադասեց վորքան կարելի յե քիչ հիշատակել այդպիսի ցուցմունքներ: Սպանությունների մեղադրանքը հենվում էր Կարելիայի սպիտակ գվարդիականների ճշմարիտ նկարագրությունները, վոր Անտիկայանեհ տվել էր իր «Հանուն խորհրդային Կարելիայի» գրքում, չափազանց անճոռնի կերպով վերածվել եյին «կարմիրների գազանությունների»:

Նույն հաստատակամությամբ, վորով Անտիկայանեհ ժխտեց և ջախջախեց սպանությունների վերաբերյալ մեղադրանքը, նա խոստովանեց իր քաղաքական համոզմունքները: «Յես մեղավոր եմ նրանով, վոր քաղաքական պայքար եմ մղել և մասնակցել եմ քաղա-

բաւական պայքարին... յէս գլուխս բարձր պահած ընդունում եմ դատաւճիռը: Կարելի չե վոչնչացնել ինձ, բայց չի կարելի վոչնչացնել բանվոր դասակարգի գործը, հեղափոխութեան գործը, վորին պատկանում ե իմ կյանքը: Դուք չեք կարող վոչնչացնել կոմունիզմը: Այն կհաղթանակի»:

Ֆինլանդիայում և արտասահմանում Անտիկայնեների հետ համերաշխ լինելու կամպանիայից վախեցած դասակարգային դատավորները նորից հետաձգեցին դատաւճիռի ընդունումը: Միայն 1935 թվի ապրիլի 25-ին նրանք վորոշեցին հայտարարել հրեշավոր դատաւճիռը. ցմահ տաժանք սպանութեան համար, ութ տարվա բանտարկութիւն և տասնհինգ տարվա իրավազրկութիւն պետական դավաճանութեան համար, վեց ամսվա բանտարկութիւն իշխանութիւններին մոլորութեան մեջ գցելու համար:

Այս գազանային դատաւճիռի հայտարարումից հետո գալլուցիի ալիքը տարածվեց ամբողջ աշխարհում: Շվեդիայի ՄՈՊՐ-ը կազմակերպեց մասսայական միտինգներ և հաւաքեց հազար ստորագրութիւն բողոքի այն հուշագրի համար, վորը հասցեագրված եր ֆիննական կառավարութեան: Շվեդական բանվորները Ստոկհոլմի կայարանում Ֆինլանդիայի պրեզիդենտին պիմավորեցին հետեյալ բացականչութիւններով՝ «Կեցցե՛ Անտիկայնեն», «Ազատութիւն Անտիկայնենին», «Կորչի դահիճների կառավարութիւնը»:

Համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ ֆիննական կառավարութիւնը ստիպված եր մանչովրի դիմել:

1935 թվի նոյեմբերի 4-ին գերագույն դատարանը վերացրեց դատաւճիռը, վոր ընդունված եր սպանութեան համար, այն հաշվով, վոր 1936 թվի մայիսին Անտիկայնենին նորից դատապարտի ցմահ տաժանքի: Նախապատրաստելով այս դատաւճիռը, ֆիննական պահնորդական բաժինը վոչ մի բանի առաջ կանգ չեր առնում: Բանվոր Դագերբոմին—Անտիկայնենի պաշտպանութեան կարևոր վկային տարան անտառ և սպանեցին: Նրա մահը ներկայացվեց վորպես «ինքնասպանութիւն»: Անտիկայնենի պաշտպանին տարան հոգեկան հիվանդների տուն և ապա ազատեցին միայն հասարակութեան բողոքի շնորհիվ: Խորհրդային Միութիւնից ժամանած վկա Մատվեյեվին պահնորդական բաժնի գործակալները և սպիտակ գվարդիականները սպանում եյին տանջանքներով ու սպանութեամբ, ստիպելով կեղծ ցուցմունքներ տալ:

Աշխարհի ամենաականավոր գործիչներն իրենց ձայնը բարձրացրին Անտիկայնենի դատական սպանութեան դեմ: Անգլիական համայնքների պալատի և յորդերի պալատի 14 անդամները բողոք հայտնեցին Լոնդոնի ֆիննական դեսպանին: Բայց հակառակը այդ բողոքի, գերագույն դատարանը 1937 թվի հունիսի 13-ին հաստատեց Անտիկայնենի դատաւճիռը:

Հելսինգֆորսի կենտրոնական մի կամերայում միայնակ բանտարկված Անտիկայնեն լուր ստացավ իր մոր մահվան մասին: Իհարկե նրան թույլ չտվեցին մասնակցել իր մոր թաղման և նա իր մոտիկներին ուղարկած նամակում գրում եր.— «Այսոր մորս գերեզման են տանում... Նրա կյանքի վերջալուսը կա-

րող եր ամելի ուրախ լինել, նա ստիպված եր շատ տառապանքներ կրել իր կյանքում: Իմ կողմից կարմիր ծաղիկներ դրեք դագաղի վրա և հայտարարեցեք, վոր իմ մայրը վոգեվորված եր նույն վոգով՝ և նույն իդեալներով, ինչ, վոր յես: Յես գիտեմ, վոր նա հավանություն եր տալիս իմ կամքին և այն պայքարին, վոր յես մղում եմ աշխատավոր ժողովրդի դործի համար, այն գործի, վորի համար հիմա յես բանտարկված եմ ալատեղ»:

Ֆինլանդիայի աշխատավորները կատարեցին Տոյվո Անտիկայնենի ցանկությունը: Հոծ զորասլունով գնում ելին Անտիկայնենի մոր դագաղի հետևից և հազարավոր բանվորներ պատվավոր պահակ կանգնեցին այն կնոջ դագաղի մոտ, վորը կյանք եր տրվել հերոսական դասակարգային մարտիկ Տոյվոյին: Այդ պրոլետարական համերաշխությունը մի հիանալի ակտ եր, այդ մի յերդում եր՝ չհանգստանալ այնքան ժամանակ, վոր Անտիկայնեն նորից ազատ լինի:

Պրոլետարիատի յերդումը կատարված ե, Տոյվո Անտիկայնեն այժմ ազատ ե, Ֆինլանդիայի ժողովրդի հերոս և հարազատ զավակ Տոյվո Անտիկայնեն առաջադրվեց Կարելո-Ֆիննական ԽՍՀ հանրապետությունից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի դեպուտատ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՈՊՐ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Վոտք դնելով սոցիալիստական հայրենիքի տերիտորիան, ցանկանում եմ ի սրտե շնորհակալություն հայտնել ձեզ — ՄՈՊՐ-ականներիդ և Խորհրդային Միության բոլոր աշխատավորներին այն մեծ հոգատարություն համար, վոր դուք ցուցաբերեցիք իմ նկատմամբ:

Բանտում ինձ պահում ելին չափազանց խստագույն մեկուսացման մեջ, բայց յես ամբողջ ժամանակ գիտեյի, վոր յես մոռացված չեմ և վոր յես միայնակ չեմ: Վոչ մի բանտային պատեր և վանդակներ չեյին կարող զրկել ինձ այն համոզմունքից, վոր յես մեկուսացված չեմ վողջ աշխարհի բանվորներից և ԽՍՀՄ-ի աշխատավորներից:

Հակառակ բոլոր արգելակներին, յես զգում եյի պրոլետարական համերաշխությունը: Դատարանի նիստերի ժամանակ և գտնվելով բանտային վանդակների հետևում, յես իմացա հազարավոր նամակների և համերաշխության այլ արտահայտությունների մասին: Յես իմացա իմ դատական պրոցեսի կապակցությամբ ՄՈՊՐ-ի կողմից կազմակերպված միջազգային հզոր կամպանիայի մասին: Պետական մեղադրողը պահանջում եր իմ գլուխը, բայց յես պատասխանեցի նրան — «Դուք վոչ թե իմ գլուխը կստանաք, այլ ձեր բախտի

նժարը թեքող ծանրություն»։ Այդպես էլ կատարվեց։
Միջազգային համերաշխությունը ազատեց ինձ մահից։

Դեռ 1940 թ. ապրիլի 21-ին յես շղթայակապ եյի,
իսկ այժմ գտնվում եմ Խորհրդային Միությունում և
յերջանիկ եմ, վոր ճնշման և շահագործման աշխար-
հից անցա հաղթական սոցիալիստական աշխարհը։

Թանկագին ընկեր ՄՈՊԲ-ականներ.

Դուք մեծ գործ եք կատարում— դուք կապիտալի
և ռեակցիայի գերյալներին մեծագույն նյութական և
բարոյական ոգնություն եք հասցնում։ Հիշեցեք և շմո-
ռանաք դրա մասին, հատկապես այժմ, յերբ պատե-
րազմի հրձիգները մարդկությունը ներգրավեցին ար-
յունոտ սպանդի մեջ և խստորեն դատաստան են տես-
նում բոլոր նրանց հետ, վորոնք պայքարում են իմպե-
րիալիստական պատերազմի դեմ։

Ընկե՛ր ՄՈՊԲ-ականներ.

Ամենից թանկ գնահատեցեք պրոլետարական ին-
տերնացիոնալիզմին հավատարիմ լինելը։

ԿԵՅՅԵ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ ՄԵՄ ԴՐՈՇԸ։

ՏՈՅՎՈ ԱՆՏԻԿԱՅՆՆԵՆ

1940 թ. մայիսի 13

997
4



ՊԱՎԵԼ ՏԿԱԶՆԿՈ



ՊԱՎԵԼ ՏԿԱԶԵՆԿՈ

(Համառոտ կենսագրական տեղեկանք)

1922 թվի ձմեռային նախալուսաբացին աղջամուղջ եր Բուխարեստում: Լուսթյուն: Աստիճանաբար աճում է տարրինակ աղմուկը: Թվում է կարծես յերկաթե մուրճեր առած ութմի, անկանոն խփում են դրանիտի վրա: Աղմուկը մոտենում է: Ավելի պարզորոշ լսվում են ձայները: Արդեն կարելի չե տարբերել շղթաների զրնգոցը:

Այս փողոցով, վորը Դեալու-Սպիրեի բանտից տանում է դեպի թատրոնի շենքը, վորտեղ յերկրորդ բանակային կորպուսի տրիբունալի նիստերն եյին տեղի ունենում, շարժվում եյին բանտարկյալ տղամարդկանց և կանանց շարքերը: Այդ շարքերի առջևից գնում եր 15 հոգուց բաղկացած մի խումբ, վորին ռումինական վոստիկանությունը համարում եր «հատուկ վտանգավոր», նրանք բոլորը շղթայակապ եյին, ծանր շղթաները քաշ եյին տալիս գետնով:

Նրանց մեջ առաջին շարքում քայլում է մի վայելչակազմ սեվաչյա տղամարդ, նրա նեղ, գունատ յերեսը, լայն խելոք ճակատը, փայլուն հաղթական ժպիտը, ակամայից դրավում է մարդու ուշադրությունը, կաշկանդում հայացքը: Դա Պավել Տկաչենկոն է, Բեսսարաբիայի հեղափոխական բանվորների և գյու-

ղացիների առաջնորդը, ռումինական պրոլետարիատի առաջնորդներից մեկը:

Բանտարկյալներին ուղեկցում է զինվորների, ժանդարմերիայի և շախկների հսկայական ջոկատ: Գլխավոր դռների և խաչփողոցների մոտ կանգնած են զինվորական պահակախմբեր, բայց Տկաչենկոն այդ բոլորի վրա ուշադրություն չի դարձնում: Նա իր կողքին քայլող յերիտասարդ ընկերոջը կիսաձայն բացատրում է Կոմիտեների 2-րդ համաշխարհային կոնգրեսի թեզիսները՝ ազգային և գաղութային հարցերի շուրջը, վրրը նա ստացել էր բանտում նախորելյին, անլեզալ ձեւով:

Շարքերն մոտենում են թատրոնի շենքին, «հատուկ վտանգավորներից» հանում են շղթաները և մեկական ներս են տանում փայտե վանդակի մեջ, դահլիճի ձախ անկյունում:

Արդեն մի քանի ուր է, ինչ ռումինական յերիտասարդ կոմկուակցության 270 ակտիվիստների դատավարությունն է: Դահլիճի բոլոր վանդակներում նույնիսկ մեղադրողներին հսկող պահակախմբերի շարքերում և սպաների մեջ նկատելի չէ հուզմունք: Այսօր դատում են Տկաչենկոյին:

Զինվորական տրիբունալի նախագահը, չաղ զրնդապետը կանչում է Տկաչենկոյին:

«Մեղադրյալ քեզ անվանում են Պավել Տկաչենկո»:

Տկաչենկոն գլխով դրական նշան է անում:

«Քո հեղափոխական գործունեության ժամանակ

ռենցել ես տասնմեկ մականուն», — շարունակում է հարցաքննությունը նախագահը:

Տկաչենկոն ժպտալով հաստատում է նաև այն: Համբերությամբ նա լսում է իր մականունների թվարկումը՝ Բազարով, Յեգորին, Լյուդիմիր, Յաշա...

Գնդապետը պահանջում է, վորպեսզի Տկաչենկոն պատմի իր կենսագրությունը և գործի հանգամանքները: Տկաչենկոն շարունակում է ժպտալ, նա ուրախանում է, վոր վոստիկանությունն այնպես էլ չիմացավ իր իսկական անունը:

Շատ ընկերներ, վորոնք յենթարկվել են ռումինական գաղտնի վոստիկանության զննանների տանջանքներին, գիտեն, վոր նրան իրականում անվանում են Անտիպա, վոր նա հին կայսրության բնակիչ է, Բենդեր տեղափոխված յերկաթգծի աշխատողի վորդի, վորը հետագայում սպանվեց պետլյուրական բանդիտների կողմից:

Տկաչենկոն 16 տարեկան էր, յերբ կատարվեց հեղափոխությունը: Հեղափոխությունը նրան գտավ լենինգրադում: Իր յերիտասարդական վողջ կրակը, իր վողջ յեռանդը նա ուզում է նվիրել հեղափոխությանը:

Նրան հուզում է իր հայրենիքի՝ Բեսսարաբիայի վիճակը:

Հաղթահարելով հսկայական դժվարությունները, անընդհատ ընդհարումների մեջ սպիտակ գվարդիականների հետ, Տկաչենկոն մի խումբ ընկերների հետ անցնում է Բեսսարաբիա: Բենդերում նա ստեղծում է հեղափոխական կազմակերպություններ, ղեկավարում է նրանց: Տկաչենկոն մեկն էր այն կարմիր գվար-

դիականներից, վորոնք կովով թողին Բեսարաբիան նրա գրավման մոմենտին, ռումինական բանակի կողմից:

Շուտով նա նորից վերադառնում է հայրենիք, վորպեսզի շարունակի Բեսարաբիայի աշխատավորների պայքարը: 1919 թվին Բեսարաբիայի կոմունիստական կուսակցության կազմակերպությունների մեջ պրովոկատորների և դավաճանների ներս խողովման հետևանքով առաջանում է աշխատանքի մեծ ձախուղում:

Մինչդեռ Տկաչենկոն աշխատում է կազմակերպության վերականգնման ուղղությամբ: Կարճ ժամանակում իրեն հաջողվում է Բեսարաբիան ծածկել կոմունիստական կազմակերպությունների նոր ցանցով: Շնորհիվ նրա համառ աշխատանքին, ամրանում են չեզալ պրոֆմիտությունները: Առաջավոր բանվորները համախմբվում են կոմունիստական բջիջների մեջ: Միաժամանակ Տկաչենկոն ղեկավարում է յերիտասարդության սոցիալիստական միության աշխատանքները:

1920 թվին առաջին անգամ ձերբակալվում է և Քիշինևի բանտն է նետվում: Նրա բանտարկության հետևանքով Քիշինևում սկսում են աշխատավորների գործադուլներ և հուժկու ցույցեր, վորոնց մասնակցում էյին նաև շրջակա գյուղերի գյուղացիությունը:

Մի առ ժամանակից հետո հաջողվում է փախուստը:

Հետագայում դատարանում պատմելով իր փախուստի մասին գաղտնի վոստիկանության բանտից, նա հայտարարում է՝ «վոստիկանության պարտակա-

նությունն է հսկել բանտարկյալ հեղափոխականներին, իսկ բանտարկված հեղափոխականի պարտականությունն է փախչել, վորպեսզի շարունակի իր աշխատանքը: Վոստիկանությունը ինձ վրա չե հսկել, ահա և յես փախել եմ»:

Բանտից ազատվելով Տկաչենկոն անմիջապես իր վողջ եներգիայով անձնատուր է լինում աշխատանքին: Քաղաքական զեկուցումներ, ստորին կազմակերպություններին հրահանգներ տալ, ընդհատակյա թերթերի և թուցիկների հրատարակում և տարածում, գործադուլների կազմակերպում և յելույթներ, այդ բազմատեսակ աշխատանքին Պավել Տկաչենկոն նվիրում է իրեն ամբողջությամբ:

Դրա հետ միասին նա ժամանակ է գտնում Մարքսիզմ-լենինիզմը ուսումնասիրելու: Իր վողջ հեղափոխական կրակը նա նվիրում է ռումինական միասնական կոմկուսակցության ստեղծման գործին:

Ռումինական միասնական կոմկուսակցության ստեղծման համար մեծ նշանակություն ունեցավ 1921 թ. կուսակցական կոնֆերանսը, վորին Տկաչենկոն ամենագործնական մասնակցություն ունեցավ:

Տկաչենկոն բնութագրելով կոնֆերանսը, ընդգծում է նրա խոշոր նշանակությունը ռումինական կոմունիստական բոլոր խմբերի միացման գործի տեսակետից: Նա իր պարտքն է համարում հրապարակորեն մատնանշել այն բանը, թե ինչպիսի վնաս բերեց Ռումինիայի հեղափոխական շարժմանը 1918 և 1919 թվականների ընթացքում Բեսարաբիայում իշխող տրամադրությունը, այսինքն այն հոսանքը, վորը դեմ

էր Ռումինիայի և Բեսարաբիայի կոմունիստական կուսակցությունների միացմանը:

Տկաչենկոյի ձերբակալությունը կատարվում է 1921 թվին Յասսիում, վորտեղ նա կազմակերպել էր ընդհատակյա կուսակցական տպարան: Սակայն Տկաչենկոն վոչ միայն տպարանի կազմակերպիչն էր, այլև այդ տպարանում տպվող թերթի խմբագիրը, նույնիսկ գրաշարը, վորովհետև գաղտնապահության պաշտպանման նկատառումներով անհրաժեշտ էր, վորպեսզի ավելի քիչ ընկերներ իմանային տպարանի գոյության մասին:

Բայց և բանտում Տկաչենկոն շարունակում է աշխատանքը: Իր ազգական բանտարկյալների ոգնությունը նա կանոնավոր կապ է հաստատում գտնվող իր ընկերների հետ, շարունակ բանտից նրանց է հանձնում քաղաքական ինֆորմացիաներ, կուսկազմակերպչական ցուցումներ: Վագարեշտի բանտից նա մշտական կապ է ստեղծում Ժելավա բանտի բանտարկյալների հետ: Գաղտնի վոստիկանության զընդաններում, բանտում, շղթայակապ Պավել Տկաչենկոն միշտ մնում է հեղափոխական մարտիկ:

Ռումինիայի որենքներով արգելված է շղթայակալություն: Բայց Տկաչենկոն և մյուս բանտարկյալները, վորոնք Վագարեշտի բանտն ելին բերվել ծանր շղթայակապ ելին: Տկաչենկոն բողոքում է: Մուսլ բանտի կամերայից նա կազմակերպում է քաղբանտարկյալների հացագույ: Պահանջը կարճ և պարզ է՝ «կորչեն կանդալները» (շղթաները), «արագացնել դատավարությունը»:

Թեև բանտային ստրաժնիկները արդեն գիտեյին սննդագույի մասին, այնուամենայնիվ նրանք առավոտ կանուխ Տկաչենկոյին հաց և բուրդա յեն բերում, վորը թելի անուն է կրում, նրանք չեն կարողանում պատկերացնել, վոր խստորեն մեկուսացած Տկաչենկոն գիտե բանտարկյալների սննդագույի մասին: Տկաչենկոն թելը լցնում է պարաշի (շարժական արտաքնոց բանտերում) մեջ:

Հատակի վրա, մեկնված խսիրի յերկարությամբ Տկաչենկոն և նրա կամերային ընկերները անց են կացնում առաջին մարտական որը:

Քաղց: Նրա մասին չեն խոսում, նրան արհամարհում են: Սակայն նա իրեն զգացնել է տալիս: Մընդագույի յերկրորդ որն է: Թուլությունը մարմնի բոլոր մասերում մեծանում է: Տկաչենկոն խուսափում է խոսելուց: Պետք է եներգիան պահպանել:

Յերկրորդ գիշերն է: Միայն թե քնել: Քաղցը դառնում է տանջալից: Նա չի ուզում հաշվի առնել մարդկային արժանապատվությունը, բանտարկյալի արժանապատվությունը...—

Հասնում է յերրորդ որը: Քաղցը տակն ու վրա յանում փորոտիքը, շղթաները սեղմում են հարյուր փթանոց քարի նման: Թվում է թե յերկաթյա ողակները՝ սառը և ծանր կաշկանդում են մարմնի յուրաքանչյուր մասնիկը:

Յերրորդ որը բանտարկյալները անց են կացնում տանջալից կիսաքնի մեջ: Հինգերորդ որը գայթակղեցնում է սննդի հոտը, վորը հաստ պատերից ներս է մտնում: Բանտարկյալները յերազում տեսնում են

համեղ կերակուրներ: Գծվածի նման ուտել են ցանկանում: Բայց բանտարկյալները իրենց պինդ են պահում:

Բոլոր մտքերը ներդաշնակորեն կարգավորված են: Թխթե շախմատային տախտակ, կարտոնից շինված շախմատային ֆիգուրներ: Տկաչենկոն շախմատ է խաղում իր ընկերոջ հետ... Յերեկոյան կապիտանը կամերա յե մտնում և իմիջի ալյուց հարցնում է՝ շեն ուզո՞ւմ արդյոք բանտարկյալները դադարեցնել սննդադուլը: Հաստատ ձայնով, ատելությամբ վառված աչքերով յերկուսն էլ բացականչում են «վոչ»:

Հետևյալ առավոտը փոքրիկ տոմսակ՝ «մայրաքաղաքի մամուլն արդեն աղմուկ է բարձրացրել: Բանվորական կազմակերպությունները բողոքում են»:

Այդ տողերը խրախուսում են Տկաչենկոյին:

Սննդադուլի հինգերորդ և վեցերորդ օրն է: Բանտարկյալներին թվում է մարմինը դանդաղորեն հողը հողի յետևից մեռնում է, ստամոքսը սեղմվում է— գնդիկ է դառնում: Յեվ հաճախակի ջղաձգությունից չի թողնում քնելու: Այդ օրը մյուս կամերայի բանտարկյալները բանտի աղմինիստրացիայի կողմից խմբվելով դադարեցնում են սննդադուլը: Նրանց հավատացրել էին նրանում՝ իբր Տկաչենկոն ազատվել է շղթաներից: Բայց Տկաչենկոն և իր կամերայի ընկերը շարունակում են սննդադուլը: Ութերորդ օրը նրանց մոտ մտնում է զինվորական դատախազը: Նա ծաղրում է բանտարկյալներին՝ «յերբ դուք ստակեք, այն ժամանակ կհանենք շղթաները»:

Ժամանակը անցնում է: Սննդադուլի իներորդ

օրն է: Բանտապահները տարակուսում են՝ «նրանք ուտում են դադարի» և ստրաժնիկները ժամերով նաչում են անցքից, վորպեսզի համոզվեն դրանում: Վոչ՝ Նրանք իրոք սննդադուլ են պահում:

Տկաչենկոն իր ընկերոջ հետ կամերայում խոսում է կամացուկ: Նրանք դեռ ի վիճակի չեն բղավելու, բայց պետք է ուժերը խնայել:

Տասն և տասնմեկերորդ օրն է: Տկաչենկոն արյուն է թքում: Նա դողացնում է: Չնայած դրան նրան նորից հաջողվում է կապ հաստատել մյուս բանտարկյալների հետ:

Բանտը աղմկում է: Տասներկուերորդ օրվա առավոտյան բոլոր քաղ. բանտարկյալները կրկին հայտարարում են... «Զի կարելի թույլ տալ վորպեսզի ընկերները մեռնեն մութ կամերայում»,— հայտարարում են նրանք: Միաժամանակ հասունանում է նաև մի այլ վճիռ: Համերաշխության սննդադուլը կարող է ձգձգվել: Կարող է շափազանց ուշ լինել: Պետք է դիմել պալքարի այլ միջոցի:

Տկաչենկոյի սննդադուլի տասներկուերորդ օրը յերեկոյան ժամը 8-ին, 74 քաղ. բանտարկյալներ զրոսանքի ժամը վերջացնելուց հրաժարվում են վերադառնալ կամերաները:

«Տկաչենկոյի շղթաները հանեք»,— բացականչություններով դիմավորում են բանտի դիրեկտորին:

Մայրաքաղաքի հեռախոսներով տազնապ են զարկում— «Վազարեշտի բանտն է»: Ժամը 11-ին յերեւում են զխավոր դատախազը, զինվորական մինիստրության ներկայացուցիչների վոստիկանական պրեզի-

դենտը, զինվորական դատախազը և մի դասակ զինվորներ:

Ապստամբած բանտարկյալներին սեղմեցին բանտի բակի անկյունում: Նորին մեծության թագավորի և որենքի անունով պահանջում եմ առանց հակաձուլության ցրվել Ձեր կամերաները» — հնչում է գլխավոր դատախազի բարձր ձայնը:—

«Վոչ մի կերպ: Սկզբում հանք Տկաչենկոյի շրջթաները», — պատասխանում են բանտարկյալները միաձայն:

«Պարոն կապիտան, կատարեցեք ձեր պարտքը»:

«Հրացանները լցնել»:

Շրխապնում են փականները:

«Փողհար — ազդանշան»: Հնչում է փողի յերկու կարճ ձայն: Բանտարկյալներից մեկը առաջ է գալիս և բղավում է՝ «Ձեք գնա կամերաները — սկզբում հանք շղթաները»: «Սկզբում շղթաները», — կոչում են բոլորը:

Փողհարը նորից է փչում:

Յերկրորդ անգամ, նորին մեծության և որենքի անունով, վերադարձեք կամերաները»:

Արհամարհական լռություն: Բանտարկյալները հավաքվում են բանտի պատի յերկարությամբ: Մի քանի յերիտասարդ բանվորներ բորբոքված առաջ են գալիս, պատում են իրենց վրայի շապիկները և բղավում — «կրակիր այստեղ»:

«Յերկրորդ անգամ, ցրվել դեպի կամերաները»:

Վոչ վոք տեղից չի շարժվում: Կապիտանը իրեն ուղղում է: Սառցային լռություն:

«Զգաստ, նշան բռնիր»:

«Վոչ պարոն կապիտան, դա ձեռնտու է այդ պարոններին: Կոմունիստ նահատակներին առանց այդ ել բավական է», — խոսակցության մեջ է մտնում գլխավոր դատախազը: «Դրանց զոռով քշեք դեպի կամերաները»:

Այդ գիշեր շորս ղեկավարներ ծեծվեցին և նետվեցին կարցեր: Տկաչենկոն ևս ընկնում է կարցեր: Նա դեռ չի դադարեցնում սննդադուր. նա գիտե, վոր բունդի լուրը մայրաքաղաքի բանվորական մասսաներին վտարի կհանի: Նրա հավատը խոր համբուրաշխության նկատմամբ չի խաբում նրան: Սննդադուրի 18-րդ որը հանում են նրա շղթաները և ազատում կարցերից:

Սակայն վորոշ ժամանակից հետո նորից նրան շղթայակապում և փոխադրում են Դեպուտատի յանտը:

270-ի պրոցեսը յերկար տևեց:

Պավել Տկաչենկոն զինվորական դատարանի առաջ իրեն պահում է կայուն, բուռն յերկրներ: Դատարանի հարցերի կապակցությամբ նա համեստորեն պատմում է իր կենսագրությունը, վախենալով, վորպեսզի մի վորեք անգգուշ արտահայտություն կվնասի մյուս ընկերներին: Տկաչենկոն պատմում է, թե ինչպես նա մասնակից դառավ հեղափոխական շարժմանը, ինչպես նա գիտակցեց, վոր միայն կոմունիստական կուսակցությունը կարող է ազատագրել Բեասարաբիայի բանվորներին և գյուղացիներին տանջանքներից:

Խարաղանելով բուրժուական դեմոկրատիայի կեղծությունը, հայտարարում է — «Դուք խոսում եք մամուլի

ազատութեան մասին, բացականշում ե Տկաչենկոն, բայց իրականում դուք զրկում եք բանվորներին ժողովների, խոսքի և մամուլի ազատութիւնից: Ուստի մենք ինքներս ենք այդ ազատութիւնը ձեռք բերում և նրանով կոգտվենք անլեզալ մինչև այն ժամանակ, յերբ կնվաճենք իսկական ազատութիւն, սոցիալիստական ազատութիւն»:

Այդ ճառի համար Տկաչենկոն կարցեր ե նետվում, վորտեղ նրան շատ անգամ են նստեցնում: Կարցերը այնքան նեղ ե, քարե տուպրակ, վոր այնտեղ կարելի չե միայն ձգված կանգնել, հնարավորութիւն չունենալով շարժել վոչ ձեռքերը վոչ ել վոտքերը:

Այդ դրութեամբ բանտարկյալը անց ե կացնում 6—10 որ: Արդեն յերրորդ որը վոտքերը ուռչում են, տանջանքները ավելանում են նաև վոտքի շղթաներից: Յերեվում են թարախակալ վերքեր: Ձմեռը վոտքերը սառչում են և կալում ցեմենտե հատակին: Բանտարկյալի վողջ սնունդը կարցերում բաղկացած ե մի քառորդ յեգիպտացորենի հացից և ջրից: Այդ պայմաններում ե գտնվում Տկաչենկոն տասն որ, վորոնք նախորդում ելին նրա յելույթին դատարանում:

Սակայն Տկաչենկոյի հեղափոխական վոգին հաղթահարում ե նրա ֆիզիկական տկարութեանը: Հակառակ սպառնալիքների, Տկաչենկոն ի լուր բոլորի, դատարանի դահլիճում հայտարարում ե՝ իր նվիրվածութեան մասին՝ կոմունիստական կուսակցութեան, պրոլետարական հեղափոխութեան: Իր պաշտպանողական ճառը նա վերջացնում ե հետևյալ խոսքերով. «Յես հեղափոխական զինվոր եմ, այդպիսին կմնամ»:

Պրոցեսը վերջանում ե կառավարութեան կատարյալ պարտութեամբ: Յերկրում և արտասահմանում առաջացած հուժկու բողոքի շարժման ճնշման տակ միևիստերների նախագահ Բրիտանուն ստիպված ե ներում շնորհել մեղադրյալների մեծամասնութեանը — մինչև պրոցեսը վերջանալը: Պալիլ Տկաչենկոն ամենիստիայի տակ չի ընկնում: Նա դատապարտված ե յերկու տարվա տաժանակիր աշխատանքի, սակայն ռեակցիան ծրագրում ե Տկաչենկոյի սպանութիւնը: Քիշինեվում Տկաչենկոյի դեմ նոր գործ ե սկսվում, վորով զինվորական դատարանը Տկաչենկոյին մահվան պատժի չե դատապարտում նրա բացակայութեամբ:

1923 թվի սկզբներին Տկաչենկոյին փոխադրում են զինվորական բանտ, Կոնստանցիայում, վորտեղ նրա գործը, համաձայն բողոքարկման, պետք ե վերանայվի: Լսելով, վոր նրան ուզում են Կոնստանցից քիշինեվ փոխադրել, Տկաչենկոն ճանապարհին հարձակվում ե դեպի դատախազը, փախուստ ե կատարում: Սակայն մի քանի որից հետո Տկաչենկոյին նորից են ձերբակալում: Նա ստիպված ե նոր պատիժ կրել: Սակայն հասարակութեան ճնշման տակ կառավարութիւնը այլևս չի վճռում նրան Բեսսարաբիա ուղարկել: Նրան աքսորում են Ռումինիայից:

Կարճ ժամանակից հետո Տկաչենկոն անլեզալ վերադառնում ե Ռումինիա: Նրան ընտրում են Կոմ. կուսակցութեան քաղ. բյուրոյի անդամ:

1924 թվին կարճատև լեզալ շրջանից հետո, կուսակցութիւնը նորից ստիպված ե անցնելու անլեզալ դրութեան: Այդ ժամանակ Վիեննայում տեղի չե ու-

սեննում Խորհրդային-Ռումինական կոնֆերանս Բեսարաբիայի հարցի առթիվ: Ռումինիայի կոմ. կուսակցությունը լուզունգ է առաջադրում՝ «Բեսարաբիային տալ ինքնորոշման իրավունք: Համաժողովրդական քվեարկություն»: Կառավարությունը դրան պատասխանում է խստագույն տերրորով: 1924 թվին Տատարբունարում (հարավային Բեսարաբիա) ծագում է գյուղացիական խռչոռ ապստամբություն, վորը խստորեն ճնշվում է, թափվում է արյան ծով, վորը յերկրով անցնում է սպիտակ տերրորի նոր ալիք:

Խստագույն ընդհատակում, յենթարկվելով հալածանքների, Տկաչենկոն ալդ ժամանակ ղեկավարում է Ռումինիայի կոմկուսակցությունը: Նա վոչ մի րոպե չի դադարում քաղաքական և կազմակերպչական աշխատանքներ կատարելուց: Այդպես նա աշխատում է մոտ յերկու տարի: 1926 թվի ոգոստոսի 15-ին փողոցում, Կարել պարկի մոտ, Բուխարեստում նրան ձերբակալում են Ռումինիայի կոմկուսակցության մյուս անդամ Բորիս Ստեփանովի հետ:

Ձերբակալությունից հետո նա իսկույն փորձ է անում փախչելու, բայց անհաջող: Գաղտնի վոստիկանության գլխավոր վարչությունում Տկաչենկոյին յենթարկում են դաժանագույն ծեծի և տանջանքների: Բայց վոչ մի տանջանք ի վիճակի չէ նրանից ցուցմունք ձեռք բերելու:

Բոլոր յեվրոպական յերկրներում ծավալվում է լայն շարժում ի ոգոտ Տկաչենկոյի, վորը ղեկավարում է հեղափոխական մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպությունը (ՄՈՊՐ), Փարիզում, Լոն-

դոնում, Վիեննայում, Բրյուսելում տեղի յեն ունենում բողոքի խռչոռ միտինգներ և դեմոնստրացիաներ, բայց ռումինական ղեակցիան հաստատապես վճռել է ազատվել վտանգավոր թշնամուց:

1926 թվի սեպտեմբերի 4-ին գաղտնի վոստիկանությունը Տկաչենկոյին փոխադրում է Քիշինևվ, վորտեղ, կատարում է նողկալի սպանություն: Տկաչենկոյի սպանության հանգամանքները ճշտորեն պարզված չէ: Ըստ մի վերսիայի, նրան գաղտնի վոստիկանները սպանել են բանտում, — մյուսի — նա գնդակահարվել է Դնեստր գետի ափին և նետվել գետը:

Տկաչենկոյի մասին հիշողությունը ապրում է Ռումինիայի աշխատավորների սրտերում և մտքերում: Պավել Տկաչենկոյի վոգով Ռումինական կոմունիստական կուսակցությունը շարունակում է դժվարին-անձնազոհ պայքարը հանուն Ռումինական ժողովրդի ազատագրման, հանուն սոցիալիզմի:

Բեսարաբիայի ժողովրդի հարազատ զավակ Պավել Տկաչենկոյի անունը և նրա պայքարի հիշատակը ընդմիշտ կմնա Բեսարաբիայի և Ռումինիայի ժողովուրդների սրտերում: Նա, վոր իր կյանքը նվիրեց Ռումինիայի և Բեսարաբիայի ժողովրդի ազատագրման համար:

Կատարված է Պավել Տկաչենկոյի իղձերը, նրա փայլուն նպատակները, նա բուրժուական դատարանին հայտարարեց «կնվաճենք իսկական ազատություն — սոցիալիստական ազատություն»: Իսկական ազատություն, յերջանկություն Բեսարաբիայի ժողովրդի հա-

մար բերեց խորհրդային իշխանությունը, Բեսսարա-
բիան ազատագրեց Ռումինական բռնակալների ձեռ-
քից հերոսական Կարմիր բանակը:

Բեսսարաբիան ազատագրված է, Բեսսարաբիան
խորհրդային է, այն, վորի համար պայքարում եր, վո-
րի համար տվեց իր կյանքը ՊԱՎԵԼ ՏԿԱԶՆՆԿՈՆ:



ԴՅՈՒՐՈ ԴՅԱԿՈՎԻԶ

ԴՅՈՒՐՈ ԴՅԱԿՈՎԻԶԸ

(Կենսագրական տեղեկանք)

Դյուրո Դյակովիչը, Հարավսլավիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար, Կոմունիստական Ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի թեկնածու:

Դյուրո Դյակովիչը ծնվել է 1886 թվին Խորվատիայում, չքավոր գյուղացու ընտանիքում: Յերբ նա Վերջացրեց յերեքասյան սկզբնական դպրոցը, հայրը նրան Սարաևոյ (Բոսնիա) տվեց փականագործի մոտ սովորելու:

Անտանեկի ծանր և անուրախ եր այն ժամանակվա Բոսնիայի բանվորի կյանքը: Անսահման բանվորական ուր, չափազանց ցածր աշխատավարձ, խոսքի և ժողովների ազատության կատարյալ իրավազրկություն: Այդ բոլորը 18 տարեկան Դյակովիչը իր վրա զգաց, աշխատելով տարբեր արհեստանոցներում և ծխախոտի գործարանում:

1905—1906 թվականներին, ռուսական հեղափոխության ազդեցության տակ Բոսնիայի և Հերցեգովինայի բանվորները կազմակերպում և պայքարի յեն յելնում իրենց իրավունքների պաշտպանության համար: 1906 թվականին Բոսնիայում և Հերցեգովինայում տեղի ե ունենում բանվորների ընդհանուր գործադուլ: Դյուրո Դյակովիչը գործադուլին ամենաակտիվ մասնակցու-

թյունն է ցույց տալիս: Այդ ժամանակվանից բոլոր քիչ թե՛ շատ աչքի ընկնող գործադուլները տեղի չեն ունենում Դյակովիչի մասնակցությամբ: Նա կարողանում է հասարակ և պարզ խոսքերով բացատրել բանվորներին նրանց առաջադրված խնդիրները, ջերմ կոչով բարձրացնել նրանց մարտական վոզին: Իր հետեւողականությամբ պայքարում և հեղափոխության գործին իր նվիրվածությամբ նա հեղինակություն, վստահություն և սեր է նվաճում Բոսնիայի և Հերցեգովինայի բանվորական լայն մասսաների կողմից:

Գործադուլային շարժումը 1906 թվին բանվորներին միացնում է պրոֆկադակերպությունների մեջ: Դյուրո Դյակովիչը շուտով դառնում է պրոֆմիության հայտնի գործիչ:

1909 թվին սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծումից հետո, Դյուրո Դյակովիչը հարում է ձախ թեմին, մասնակցում է նրա բոլոր կոնգրեսներին և հաճախակի ընտրվում է Կենտկոմի անդամ: Ծրագրի մշակման ժամանակ նա խիստ յեղույթ է ունենում ուպորտունիստների դեմ, պաշտպանելով հեղափոխական պայքարի ուղին՝ Ավստրիական միահեծանության և կապիտալիզմի դեմ:

1909 թվից մինչև 1914 թիվը աշխատելով ծխախոտի գործարանում, նա միաժամանակ լայնածավալ աշխատանք է տանում պրոֆմիություններում և սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ:

Պատերազմը հայտարարվելուց հետո, Դյակովիչը նրա կատաղի հակառակորդների թվումն է գտնվում: 1915 թվին Սարաևի արվարձանում տեղի ունեցած ժողովում նա բացարձակորեն պատերազմի դեմ է

դուրս գալիս: Ավստրիական իշխանությունները նրան ձերբակալում և մահվան են դատապարտում — իբրեւ Սերբիական լրտեսի: Սակայն դատավճռի կիրառելու նախորդակին նրան ամենատիա չեն տալիս և մահվան դատավճիռը փոխարինում են աքսորով, դեպի Վենզրիա: Աքսորավայրում նա գտնվում է մինչև 1918 թիվը (մինչև Ավստրիայի ջախջախումը), տաժանակիր աշխատանքներ կատարելով Պոմորանում և ապա Արսլում:

Բոսնիա վերադառնալուց հետո նա նոր յեռանդով անցնում է պրոֆմիոթենական և կուսակցական աշխատանքի, նրան կոպտացիայի չեն յենթարկում Բոսնիայի և Հերցեգովինայի սոցիալիստական կուսակցության և պրոֆմիության կենտկոմի կազմի մեջ: 1919 թվին նորից ձերբակալում են, այժմ արդեն նրան մեղադրում են իբրև Ավստրո-Վենգրիական շպիոնի:

Սակայն յերկար հետաքննությունից հետո ստիպված են լինում նրան կալանքից ազատել:

3-րդ Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումից հետո Դյուրո Դյակովիչը համառորեն պայքար է տանում Հարավսլավիայում կոմունիստական կուսակցություն ստեղծելու համար: 1919 թվի ապրիլին Բելգրադում տեղի ունեցած միացյալ կոնգրեսում, վորտեղ տեղի ունեցավ Սերբիայի, Խորվատիայի, Բոսնիայի, Հերցեգովինայի և Սլովինիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միացումը, Դյուրո Դյակովիչը, վորը գլխավորում էր Բոսնիայի և Հերցեգովինայի 80 հոգուց բաղկացած պատվի-

րակությունը, յեռանդուն կերպով պաշտպանում եր
իր պահանջը — ստեղծելու կոմ. կուսակցություն, «ա-
մեն կերպ ձգտելով այն իրականացնել»:

Նրան պաշտպանեցին Բոսնիայի և Հերցեգովի-
նայի 70 պատգամավորներ, սակայն ոպորտունիստ-
ները դեռևս մեծամասնություն եյին կազմում: Պա-
ռակտման վտանգի առաջ Դյակովիչը ստիպված եր զի-
ջել և համաձայնվել կուսակցությունը անվանել «Հա-
րավսլավիայի սոցիալիստական կուսակցություն (կո-
մունիստներ)» առաջարկության հետ: Իր ընկերներին
այն ժամանակ նա հայտարարեց՝ «այս անգամ ոպոր-
տունիստները մեզ խաբեցին, բայց հետևյալ անգամ
հաղթանակը մերը կլինի»: Մի տարուց հետո նրա
խոսքերը արդարացան: 1920 թվի մայիսին Վոկովայի
կոնգրեսում կոմունիստները հաղթեցին: Ջայների հըս-
կայական մեծամասնությամբ վոթոշում հանեց միա-
նալ կոմունիստական Ինտերնացիոնալին, կուսակցու-
թյունը անվանվեց «Հարավսլավիայի կոմունիստական
կուսակցություն»:

Դյակովիչը համագործակցեց ուրախությամբ վերա-
դառնում ե Բոսնիա և ամբողջությամբ նվիրվում կու-
սակցությունը ամրացնելու գործին: Նա խստագույն
պայքար ե մղում ոպորտունիստների և կուսակցության
այլ տատանվող տարրերի դեմ: Նույն 1920 թվին Սա-
րաեի բանվորները նրան ընտրում են իրենց պատգա-
մավորը պարլամենտում: Դյակովիչը սկսած 1918 թվից
նյութական մեծ զրկանքներ ե կրում: Չեռնարկատե-
րերը իմանալով թե ինչպիսի դեր ե խաղում նա բան-
վորական շարժման մեջ, նրան աշխատանքի չեն վերց-

նում: Նրա ընտանիքը՝ կինը և յերեխաները քաղցի լեն
մատնվում: Դործազրկության յերկար ամիսներ ստի-
պում են նրան վերջապես մեկնելու ընտանիքով իր
հոր մոտ — գյուղը: Այստեղ նա հագիվ իր գոյությունը
պաշտպանում ե, աշխատելով վորպես որավարձով աշ-
խատող սեվագործ բանվոր: Իր վողջ ազատ ժամանակը
նա նվիրում ե կուսակցական աշխատանքին, նա կազմա-
կերպում ե գյուղացիներին և մանր արհեստավորնե-
րին, ստեղծում ե գյուղում կուսակցական բջիջ: Դյու-
ղացիները նրան ընտրում են գյուղի տանուտեր, բայց
իշխանությունները նրան հանում են այդ պաշտոնից
և աքսորում հայրենի գյուղից:

1919—20 թվականները նշանակալից են Հարավ-
սլավիայում բանվորական շարժման լայն թափով:
Ռուսական և հունգարական հեղափոխության ազդե-
ցության տակ տեղի յե ունենում մեծ թվով գործա-
դուլներ, բանվորական լայն մասսաների մասնակցու-
թյամբ: 1920 թվի վերջերին կոմունիստական կուսակ-
ցությունը և կարմիր պրոֆեսիոնալ միությունները ընդ-
հանուր գործադուլ են կատարում: Դա առիթ ե ծառա-
յում կառավարությանը դեկրետ հրատարակելու կոմ-
կուսակցությունը ե պրոֆմիությունները ցրման մասին:
Կուսակցությունը անցնում ե անլեզալ դրության:

Կուսակցության ջախջախումից հետո Դիակովիչը
ընդհատակյա աշխատանքի ծանր պայմաններում շա-
րունակում ե պայքարը ամեն տեսակ ոպորտունիստ-
ների դեմ: 1923 թվին կուսակցության Ապրիլյան պլե-
նումում Վիեննայի և Բելգրադի կուսակցական կոն-
ֆերանսում նա խիստ քննադատում ե «ձախերին» և

աջերին, վորոնք ֆրակցիոն պայքար ելին սկսել կուսակցության մեջ: Ֆրակցիոններն երի կողմից դեպի նա ստեղծված թշնամական մթնոլորտում, վորոնք ձգտում ելին նրան հեռացնել աշխատանքից, Դյակովիչը շարունակում ե պայքարը յերկու ճակատում:

1926 թվին կուսակցության ներսում, Վիննայի յերրորդ համագումարից հետո, ֆրակցիոն պայքարն ընդունում ե առանձին սուր բնույթ: Դյուրո Դյակովիչը մեկնում ե գլուղ: Սակայն Դյակովիչը նրանցից չեր, վորոնք կարող են ապրել առանց ակտիվ մասնակցության բանվորական շարժման մեջ:

Խորվաթիայի պրոֆեսիոնալ միության խորհուրդը շուտով նրան նշանակում ե Դուգայ-Րեսի մանվածագործների տեղական պրոֆեսիոնալ կազմակերպության քարտուղար, իսկ 1927 թվին Զագրեբայի մետալիստ բանվորները Խորվաթիայում նրան ընտրում են մարզային քարտուղար: Ընկնելով իր հարազատ միջավայրը, նա աշխատում ե գիշեր ու ցերեկ, շխնայելով ուժերը: Յեվ նվաճումները իսկույն ակնհայտ են դառնում: Բանվորները սիրում են Դյակովիչի հասարակ և համոզեցուցիչ լեզուն: Պրոֆեսիոնալ շարժումը ծավալվում ե: Մասամենքը ակտիվանում են:

1927 թվին կուսակցությունը Դյուրո Դյակովիչին ուղարկում ե ԽՍՀՄ սովորելու: 1928 թվի ամառը Կոմինտերնի բաց նամակից հետո նա յերկիր ե վերադառնում ղեկավար աշխատանքի: 1928 թվի աշնան Հարավսլավիայի կուսակցական 4-րդ համագումարը Դյակովիչին ընտրում ե ՀԿԿ Կենտկոմի քարտուղար (Հարավսլավիայի կոմունիստական կուսակցության):

Ամբողջ վճռականությամբ նա ձեռնամուխ ե լինում կուս. շարքերը մաքրելու ֆրակցիոններից, նա միևնույն ժամանակ կուսակցական ղեկավարությունից հեռացնում ե ամենավտանգավոր և վնասակար տարրերին և գլխավորելով կուսակցության հավատարիմ կադրերին, վճռական հակահարված ե տալիս ֆրակցիոնների պառակտողական փորձերին:

Գալով Զագրեբ, վորտեղ կուս. կազմակերպությունը սկսել եր ակտիվ պայքար յերկու ճակատում, նա ասում եր ընկերներին՝ «Դուք կատարեցիք այն, վորի մասին հաճախ յես մտածում ելի վերջին տարիներում, ինչպես ազատել մեր կուսակցությունը այդ շարիքից: Այժմ յես համոզված եմ, վոր մենք կոգնենք բոլոր ազնիվ կուսակցական անդամներին, վերջ տալու ֆրակցիոն պայքարին և մեր կուսակցության միջից մաքրելու վերջնականապես ֆրակցիոններին»:

Սակայն Դյակովիչը յերկար չի մնում իր մարտական պոստում: 1929 թվի ապրիլի 19-ին յերեկոյան նրան Զագրեբայի փողոցում ձերբակալում են Հարավսլավիայի ՄՈՊՐ-ի սեկցիայի Կենտկոմի քարտուղար Գեյիմովիչի հետ:

Հինգ որ շարունակ Դյակովիչին յենթարկում են գազանային շարշարանքների: Նրան այրում են շիկացած յերկաթով, ասեղով ծակծկում են յեղունգների տակ, բայց նա համառությամբ լուծում ե, հրաժարվելով մի վորևե ցուցմունք տալուց:

Գիտենալով, վոր Դյակովիչը դատարանը կոգտագործի հեղափոխական ագիտացիայի համար, ինչպես նա այդ բազմիցս կատարել ե նախկին ձերբակալու-

թիւնների ժամանակ, ժանդարմական կառավարիչները վորոշում են իրենց դատաստանը տեսնել նրա հետ առանց դատարանի: Ընկ, ընկ. Դյակովիչը և Գեչիմովիչը չխթայակալ ուղարկվում են Հարավսլավիայի և Ավստրիայի սահմանը, վորտեղ և գնդակահարում են:

Մի քանի որից հետո, սահմանի մոտ ապրող գյուղացիները յերեման են բերում յերչու ալլանդակված դիակ: Դրանք Դյակովիչը և Գեչիմովիչն եյին:

Դյուրո Դյակովիչն անցավ փառապանծ ուղի, վորը հագեցված է պայքարով հանուն բանվոր դասակարգի շահերի, հանուն նրա ազատագրման կապիտալիստական անտանելի լծից: Սոցիալիստական կուսակցության հիմնադրման առաջին որից նա ամեն տեսակի ոպորտունիստների դեմ անհաշտ ու անընդհատ պայքարում, դաստիարակում է իսկական պրոլետարական մարտիկներ, վորոնք նրա հետ միասին ստեղծեցին Հարավսլավիայի կոմունիստական կուսակցություն: Յեւ կուսակցության մեջ նա շարունակում է խիստ պայքար բոլոր տեսակի ֆրակցիոներների և խմբավորումների դեմ, մաքրելով կուսակցությունը վնասակար և վտանգավոր տարրերից՝ բուրժուազիայի գործակալներից:

Դյակովիչին ճանաչում եյին վոչ միայն Բոսնիայի և Հերցեգովինայի բանվորները, նա հայտնի յեր վորջ Հարավսլավիայում: Նրա սպանությունը ծանր եր Հարավսլավիայի բանվոր դասակարգի համար: Սակայն նրա կյանքը, վորը նվիրվեց մինչև վերջը ազատագրական պայքարին, կոմունիզմի գործին նվիրվա-

ծության ու հավատարմության նմուշ է ծառայում, նա որինակ եր ծառայում, վորով դաստիարակվում ու կոմիվում են հարյուրավոր և հազարավոր մարտիկներ, ապագա հաղթանակների համար:



Պատ. խմբագիր՝ Ն. ԿՈՍՏԱՆՅԱՆ,
Տեխ. խմբագիր՝ Վ. ՄԵՍՏՈՅԵՎ
Սրբագրիչ՝ Վ. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Պատվեր 683, տիրաժ՝ 3.000.

Վ. Ֆ. 14

Հանձնված է տրտաղրության 8/VIII— 1940 թ.

Ստորագրված է տպելու 23/VIII— 1940 թ.

2¼ տպ. մամուլ. մեկ մամուլում 20480 տպ. նիշ.

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից ԲԵՐԲԵՐԻ և ԽՈՒՍՏՈՒՆԻ
տպարան, Յերևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0186824

4150 60 400.

39499

БОЕВЫЕ РЕВОЛЮЦИОНЕРЫ
Тойво Антикайнен, Павел Ткаченко,
Дюро Дякович

Издание Цека МОПР-а Армянской ССР.
Ереван—1940